

Հաշվետվություն

2024 թվականի նոյեմբերի 10-ից 15-ը Ավստրիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը

Վահրամ Պետրոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

«Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ (կրճատ՝ «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ), Գլխավոր տնօրեն:

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ավստրիայի Հանրապետություն (ք. Վիեննա), 2024թ. նոյեմբերի 10-ից 15-ը:

4. Հրավիրող կողմը

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ):

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցել հետազոտական միջուկային ռեակտորներին նվիրված միջազգային կոնֆերանսին՝ «Ձեռքբերումներ, փորձ և ճանապարհ դեպի կայուն ապագա» թեմայով: Հիմնական նպատակը՝ ճանաչողական, փորձի փոխանակման և այս պահի դրությամբ միջուկային հետազոտական ռեակտորների հիման վրա տարբեր երկրներում տարվող հետազոտություններն էին:

6. Քննարկված թեմաները

- Նոր՝ միջուկային էներգետիկական ռեակտորների ստեղծման համար անհրաժեշտ նյութագիտության ուսումնասիրությունը, ինչպես նաև նրանցում օգտագործվող նոր միջուկային վառելիքի ստացման և փորձարկման խնդիրները;
- Բժշկական ժամանակակից սարքավորումներում օգտագործվող իզոտոպների ստացման խնդիրները;
- Հետազոտական ռեակտորների բազայի հիման վրա ատոմային էներգիայի բնագավառում կադրերի պատրաստման խնդիրները:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կոնֆերանսի բացման խոսքով հանդես եկավ ԱԷՄԳ գլխավոր տնօրեն պարոն Ռաֆայել Գրոսսին, ով անդրադարձավ «Միջուկային հետազոտական

ռեակտերների» դերին ու նշանակությանը, դրանց կարևորությանը նոր միջուկային տեղակայանքների մշակման և նախագծման, բժշկական սարքավորումների ստեղծման և կիրառման, միջուկային տեղակայանքների կադրերի պատրաստման խնդիրներին:

Կոնֆերանսի ընթացքում կատարվեցին 80-ից ավելի զեկույցներ, որոնք ամփոփում են վերը նշված երեք ուղղություններով տարվող աշխատանքները այն երկրներում, որոնք շահագործում են միջուկային հետազոտական ռեակտորներ: Հարկ է նշել, որ աշխարհում այսօր 54 երկրներում շահագործվում է 234 հետազոտական միջուկային ռեակտորներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձևափոխվեց Կոնֆերանսի մասնակցից երկրներին հնարավորություն տալ օգտվելու կատարված զեկույցումներից, ինչպես նաև կատարվեց առաջարկ երկրների միջև փոխանակման:

Կոնֆերանսում ստորագրված որոշումներ և փաստաթղթեր չկան:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական տնտեսական գոտու շրջանակում հնարավորություն ունի մասնակցելու Ռուսաստանի Դաշնությունում մոտ ապագայում շահագործման հանձնվող բազմաֆունկցիոնալ արագ նեյտրոններով հետազոտական ռեակտորի (МЦИ МБИР) վրա իրականացվելիք աշխատանքներին և հետագայում օգտվելու հետազոտման արդյունքներից:

Միջազգային կոնֆերանսին փակման խոսքով հանդես եկավ ԱԷՄԳ Գլխավոր տնօրենի տեղակալ պարոն Կովալչուկը, ով շնորհակալություն հայտնեց կոնֆերանսի մասնակիցներին և կազմակերպիչներին՝ կարևորելով միջուկային հետազոտական ռեակտորների դերն ու նշանակությունը և այս բնագավառում երկրների միջև փոխանակման անհրաժեշտությունը:



25.11.2024թ.